ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Վարկ 3284-ARM (ԱԶԲ) «Մեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր»
ՈՐԱԿԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴ (QBS)
Հետաքրքրվածության արտահայտման հրավեր (ՀԱՀ)

30 մարտի 2022թ.

Վարկի համարը՝ 3284-ARM (ԱԶԲ) «Մեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր»

Առաջադրանքի անվանումը՝ ՀՀ Արագածոտնի մարզի Շենավանի միջնակարգ դպրոցի կառուցման նախագծի մշակում (Առաջադրանք 1) և ՀՀ Արագածոտնի մարզի Շենավանի միջնակարգ դպրոցի կառուցման նախագծի տեղակապում ՀՀ Արագածոտնի մարզի Հնաբերդի միջնակարգ դպրոցի տարածքում, ՀՀ Կոտայքի մարզի Կամարիսի միջնակարգ դպրոցի տարածքում, ՀՀ Վայոց Ձորի մարզի Գետափի միջնակարգ դպրոցի տարածքում, ՀՀ Արմավիրի մարզի Ջրարբիի միջնակարգ դպրոցի տարածքում, ՀՀ Գեղարքունիքի մարզի Երանոսի թիվ 2 միջնակարգ դպրոցի տարածքում (Առաջադրանք 2) ու վերոնշյալ դպրոցների կառուցման հեղինակային հսկողության իրականացում

Փաթեթի համարը (համաձայն գնումների պլանի)՝ **APD-39**
Վերջնաժամկետ՝ 2022թ. ապրիլի 13-ը

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ստացել է վարկ Ասիական զարգացման բանկից (ԱԶԲ) «Մեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիրը» (Ծրագիր) իրականացնելու նպատակով: Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (ՀՏԶՀ) Ծրագրի իրականացնող գործակալությունն է և մտադիր է այդ վարկային միջոցների մի մասն օգտագործել խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համար:
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը («Պատվիրատու») նշված Ծառայություններն իրականացնելու նպատակով հրավիրում է իրավասու խորհրդատվական կազմակերպություններին («Խորհրդատուներ») ներկայացնելու հետաքրքրվածության հայտեր: Նորակառույց և վերակառուցվող դպրոցների պատշաճ նախագծման և վերահսկման համար ֆինանսական միջոցներ կհատկացվեն տեղական խորհրդատուներին՝ ծրագրի ճարտարապետաշինարարական փաստաթղթերի մշակման, ինչպես նաև շինարարական աշխատանքների ընթացքում հեղինակային հսկողություն իրականացնելու նպատակով:
Հայտարարությամբ ներկայացված որակավորման չափանիշներին բավարարող խորհրդատուները կընդգրկվեն կարճ ցուցակում, ինչից հետո նրանց կառաջարկվի 45 օրվա ընթացքում ներկայացնել տեխնիկական և ֆինանսական առաջարկներ:
Տեխնիկական առաջարկը ենթադրում է, սակայն չի սահմանափակվում **ՀՀ Արագածոտնի մարզի Շենավանի միջնակարգ դպրոցի կառուցման նախագծի մշակում (Առաջադրանք 1) և ՀՀ Արագածոտնի մարզի Շենավանի միջնակարգ դպրոցի կառուցման նախագծի տեղակապում ՀՀ Արագածոտնի մարզի Հնաբերդի միջնակարգ դպրոցի տարածքում, ՀՀ Կոտայքի մարզի Կամարիսի միջնակարգ դպրոցի տարածքում, ՀՀ Վայոց Ձորի մարզի Գետափի միջնակարգ դպրոցի տարածքում, ՀՀ Արմավիրի մարզի Ջրարբիի միջնակարգ դպրոցի տարածքում, ՀՀ Գեղարքունիքի մարզի Երանոսի թիվ 2 միջնակարգ դպրոցի տարածքում (Առաջադրանք 2)** նախագծային առաջարկների էսքիզային տարբերակների (գծագրական մաս) մշակում, որը պետք է ներառի.

- Պայմանական գլխավոր հատակագծերի լուծումների տարբերակներ, ներառյալ տարածքների ֆունկցիոնալ գոտիավորումը, շենքի և օժանդակ կառույցների տեղակայում,
- Հատակագծային լուծումներ, նեռարյալ սենքերի մասնագրերը և մակերեսները,
- Ճակատներ, կտրվածքներ,
- Շենքի արտաքին տեսքի և ներքին տարածքների եռաչափ պատկերներ 3D ֆորմատով (ռենդեռ)
- Համառոտ բացատրագիր:

Վերը նշված գրաֆիկական մասը պետք է ներկայացվի 60×80 ցուցատախտակով, ինչպես նաև էլ. ֆորմատով: Նախագծվող դպրոցի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը (մասնավորապես դպրոցի անհրաժեշտ մակերեսը) ներկայացված է կից հրապարակված տեխնիկական առաջադրանքում:

Տեխնիկական առաջարկով ներկայացված բոլոր նյութերի պատրաստման հետ կապված ծախսերը կրում է խորհրդատվական կազմակերպությունը:
Տեխնիկական առաջարկի համար առավելագույն գնահատական ստացած ընկերությունը կհրավիրվի պայմանագրի բանակցությունների:
Խորհրդատուի հետ կկնքվի երկու առանձին պայմանագիր:

1. Փուլային- նախագծային աշխատանքների համար
2. Ժամանակի վրա հիմնված- դպրոցի հեղինակային հսկողության համար

Նախագծային ծառայությունները կմատուցվեն 300 օրվա ընթացքում: Հեղինակային հսկողության պայմանագրի ժամկետը 24 ամիս է:

Կնքված պայմանագրի սահմաններում կազմակերպությանը կհանձնարարվի **ՀՀ Արագածոտնի մարզի Շենավանի միջնակարգ դպրոցի կառուցման նախագծի մշակում (Առաջադրանք 1) և ՀՀ Արագածոտնի մարզի Շենավանի միջնակարգ դպրոցի կառուցման նախագծի տեղակապում ՀՀ Արագածոտնի մարզի Հնաբերդի միջնակարգ դպրոցի տարածքում, ՀՀ Կոտայքի մարզի Կամարիսի միջնակարգ դպրոցի տարածքում, ՀՀ Վայոց Ձորի մարզի Գետափի միջնակարգ դպրոցի տարածքում, ՀՀ Արմավիրի մարզի Ջրարբիի միջնակարգ դպրոցի տարածքում, ՀՀ Գեղարքունիքի մարզի Երանոսի թիվ 2 միջնակարգ դպրոցի տարածքում (Առաջադրանք 2) ու վերոնշյալ դպրոցների կառուցման հեղինակային հսկողության իրականացում:**

Յուրաքանչյուր դպրոցի նախագծային ծառայությունների մեկնարկի վերաբերյալ պատվիրատուն կտեղեկանի խորհրդատուին:

Խորհրդատուների կարճ ցուցակի ընտրության չափանիշներն են՝

- Ընդհանուր փորձառությունը, առնվազն 3 տարի, այդ ընթացքում նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման հաջողությամբ ավարտված պայմանագրեր, քաղաքացիական շենքերի կառուցման, վերակառուցման նախագծեր – 30 միավոր
- Վերջին 3 տարում հաջողությամբ ավարտված հասարակական շենքերի կառուցման, վերակառուցման նախագծերի պայմանագրեր՝ յուրաքանչյուրը առնվազն 5 մլն դրամ արժողությամբ - 50 միավոր
- Երկրորդ որակավորման չափորոշիչով գնահատված աշխատանքների պայմանագրային գների հանրագումար – 20 միավոր

Հետաքրքրված խորհրդատու ընկերությունները պետք է ներկայացնեն հետաքրքրվածության նամակ, կից ներկայացված իրավասության հայտարարագիր* և տեղեկություններ (կազմակերպության կանոնադրությունն ու գրանցման վկայականը, հիմնական աշխատակազմի ցանկը, ինչպես նաև վերը նշված որակավորման չափանիշով սահմանված տեղեկություններ), որոնք կհավաստեն, որ կազմակերպությունը ունի պահանջվող որակավորում և համապատասխան փորձ վերոհիշյալ ծառայությունները կատարելու համար: **Աշխատակազմի աշխատանքային ինքնակենսագրությունը պետք չէ ներկայացնել տվյալ փուլում:**

Խորհրդատու կազմակերպության ընտրությունը կատարվում է որակի հիման վրա ընտրության եղանակով (QBS) համաձայն Ասիական Զարգացման Բանկի և նրա վարկառուների խորհրդատուների վարձման ուղեցույցի (մարտ 2013թ., որը պարբերաբար լրամշակվում է):
Խորհրդատուները կարող են միավորվել այլ կազմակերպությունների հետ համատեղ գործունեության ձևով կամ վարձելով ենթա-խորհրդատու՝ իրենց որակավորումները բարելավելու նպատակով:

Լրացուցիչ տեղեկություններ հնարավոր է ստանալ ստորև բերված հասցեում, ՀՏԶՀ-ի գրասենյակից, աշխատանքային օրերին ժամը 09:00-ից մինչև 18:00-ը:
Հետաքրքրվածության հայտերը պետք է ներկայացվեն գրավոր ձևով ստորև ներկայացված հասցեով (առձեռն կամ փոստով կամ էլ-փոստով) ոչ ուշ քան **2022թ. ապրիլի 13-ը, ժամը 17:00**:
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ,
ՀՀ, ք.Երևան, 0037, Կ. Ուլնեցու 31, ՀՏԶՀ գրասենյակ,
Գնումների բաժին, 406 սենյակ,
Հեռախոսը՝ (374 60) 50-15-60,
Էլ-փոստը՝ procurement@atdf.am: